Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5
«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 մարտի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ. Ներսիսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Հ. Թադևոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան

1. «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

1.1 ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում վառելիքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի 28 փետրվարի 2018թ. Ժամը՝ 12:00-ի նիստում հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և գրություն ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն ստանալու աջակցություն՝ շտկելու առաջացած խնդիրը, քանի որ համակարգի կողմից առաջացած տեխնիկական խնդրի պատճառով չէր արտացոլվում որևէ առաջադրանք հայտերը բացելու վերաբերյալ, ինչպես նաև կասեցված ընթացակարգը սահմանված կարգով ընթացք տալու համար:
1.2 ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 07.03.2018 թվականին ստացվել է թիվ 03/26-2/4137-18 գրությունը, ըստ որի խնդիրը հնարավոր չէր ուղղել և առաջարկվում էր «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի Armeps համակարգի «Հայտեր» դաշտից ներբեռնել հայտը և շարունակել փաստաթղթային եղանակով:

2.«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգին հայտ էր ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը	**Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել “X”/**
«Ֆլեշ» ՍՊԸ	X

2.1 Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակցի առաջարկած գինը՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնման առարկայի Նախահաշվային գինը	**«Ֆլեշ» ՍՊԸ**	
				Առաջակված գինը առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Բենզին ռեգուլյար	լ	3145800,00	2746333,33	3295600,00

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցն իր գնային առաջարկը ներկայացրել է ԱԱՀ-ն ներառյալ:

3. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում վառելիքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի 07 մարտի 2018թ. Ժամը՝ 15:00-ի նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով, թիվ 3 արձանագրությամբ որոշեց նիստը կասեցնել և N 1 չափաբաժնի մասով ֆինանսական միջոցները գերազանցող գների նվազեցման շուրջ վարել բանակցություն ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված նշված չափաբաժնի մասով գնային առաջարկ ներկայացրած միակ Մասնակից՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ:

3.1 Գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստը սկսվել է 2018 թվականի մարտի 13-ին, Ժամը՝ 10:00-ին ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության շենքում, ք. Երևան, Կոմիտասի 49/2 հասցեով:

3.2 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ձևով իրականացվող գների նվազեցման շուրջ բանակցության արդյունքում N 1 չափաբաժնի մասով «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց նոր նվազեցված գնային առաջարկ:

3.3 Ստորև ներկայացվում է 13.03.2018թ. Ժամը՝ 10:00-ին «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից հայտարարած նոր գնային առաջարկը N 1 չափաբաժնի մասով.

Չ/հ	Գնման ապրանքի անվանումը	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար			
		«Ֆլեշ» ՍՊԸ			
		Առաջարկված գինն առանց ԱԱՀ-ի	Առաջարկված գինն ընդհանուր	Նվազեցված գինն առանց ԱԱՀ-ի	Նվազեցված գինն ընդհանուր
1	Բենզին, ռեգուլյար	2746333,33	3295600,00	2621500,00	3145800,00

3.4 Ելնելով վերոգրյալից, ստորև ներկայացվում է «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակցի առաջարկած վերջնական գինը՝

Չափաբաժնի համարը	Գնման ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնման առարկայի նախահաշվային գինը	«Ֆլեշ» ՍՊԸ	
				Առաջակված գինը առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	Բենզին ռեգուլյար	լ	3145800,00	2621500,00	3145800,00

4. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում վառելիքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի 2018 թվականի մարտի 13 ժամը 10:00 նիստում N4 արձանագրությամբ՝ գնահատման ընթացքում հանձնաժողովը որոշել էր N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ընթացակարգի մասնակից «Ֆլեշ» ՍՊԸ-ին, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

5. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, ինչպես նաև «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովը որոշեց.

5.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

5.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

5.3 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Գ. Ներսիսյան

2. ---------- Լ. Միքայելյան

Բացող անդամներ՝

1. ---------- Հ. Թադևոսյան

2. ---------- Ա. Եղիազարյան